

# ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

## Աղիքային վարակիչ հիվանդություններ

2022 թվականի օգոստոս ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 1455 դեպք, ինչը մոտ 1.2 անգամ նվազել է 2021 թվականի օգոստոս ամսվա հետ համեմատ: Աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել, համաճարակային իրավիճակը կայուն է՝ տարվա տաք շրջանին բնորոշ ակտիվությամբ:

Օգոստոս ամսին հուլիս ամսվա համեմատ արձանագրվել է հիվանդացության աճ՝ մոտ 1.2 անգամ, ինչը բնորոշ է տարվա այս շրջանին:

## Սուր շնչառական հիվանդություններ

ՀՀ-ում 2022թ. օգոստոս ամսին արձանագրվել է սուր շնչառական վարակներով (ՍՇՎ) պայմանավորված ցածր ակտիվություն, հիվանդացությունը համաճարակային շեմից ցածր է մոտ 1.2 անգամ: Հիվանդացության ցուցանիշն ըստ 100000 բնակչի կազմել է 471.3, ինչը հուլիս ամսվա համեմատ բարձր է՝ մոտ 1.3 անգամ, իսկ 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ 1.1 անգամ: Ընդհանուր դեպքերի 46%-ը կազմում են 0-18 տարեկան երեխաները, որից 64%-ը 0-4 և 36%-ը՝ 5-14 տարեկաններ: Շտապ օգնության կանչերի 30%-ը պայմանավորված են ՍՇՎ-ով:

Դետքային համաճարակաբանական հսկողության շրջանակներում իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում գրիպի հարուցիչներ չեն հայտնաբերվել: Այլ շնչառական վարակներից հայտնաբերվել են ռինովիրուս, պարագրիպ, ադենովիրուս, բոկավիրուս, ռեսպիրատոր սինցիտիալ վիրուս հարուցիչները, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության SARS-Cov-2 հարուցիչներ:

## Կորոնավիրուսային հիվանդություն

2022 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ Հայաստանում արձանագրվել է 439302 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 14846.3), որից՝ 3410-ը (0.8%) ստանում է բուժում, 425531 (96.9%) անձ առողջացել է, 8669 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 293) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 4904 դեպք (հ.գ. 165.7 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (4037 դեպք, հ.գ. 136.4 դեպք ըստ 100.000 բնակչության) աճել է 21%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 25.7%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 24.2%:

Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 165.7 դեպք ըստ 100.000 բնակչության, իսկ թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 25.7%:

### **Քիմիական թունավորումներ**

Հայաստանի Հանրապետությունում օգոստոս ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 395 դեպք, որոնց 27.8%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 72.2%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը՝ 45.3%-ը, արդյունք են թունավոր կենդանիների խայթոցի, 17.2%-ը՝ ալկոհոլային թունավորումները՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունման, 17.2%-ը՝ դեղամիջոցներով, 10.4%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից, 3.3%-ն՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցությունից, 2%-ը՝ թունաքիմիկատներից, 3.3%-ն՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցությունից, 1.3%-ը խոտաբույսերից, 0.8%-ը թմրամիջոցներից:

2022թ. օգոստոս ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը աճել է 1.4 անգամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

### **Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի օգոստոս ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշն աճել է 1.5 անգամ: Սույն թվականի օգոստոս ամսին արձանագրվել է սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի 3 դեպք:

### **Չոռոնոզ և մակաբուծային հիվանդություններ**

Հանրապետությունում 2022 թվականի օգոստոս ամսին հատուկ վտանգավոր վարակների՝ սիբիրյան խոցի, լեպտոսպիրոզի, կատաղության, տուլարեմիայի դեպքեր չեն արձանագրվել: Արձանագրվել է առաջնակի հայտնաբերված սուր բրուցելոզի 22 դեպք:

Հանրապետությունում 2022թ. օգոստոսին հանգիստ է եղել նաև մալարիա հիվանդության համաճարակային իրավիճակը, բերովի դեպքեր չեն արձանագրվել:

2022 թվականի օգոստոս ամսին արձանագրվել է ընդերային լեյշմանիոզի 1 դեպք՝ Տավուշի մարզում: Գրանցվել է Լայմի հիվանդության 3 դեպք, որից 2-ը՝ Երևանի բնակիչների մոտ (վարակը տեղի է ունեցել Դիլիջանում և Նոյեմբերյանում):

Տգերով փոխանցվող այլ հիվանդությունների, այդ թվում՝ Ղրիմ-Կոնգոյի հեմոռագիկ տենդի, անապլազմոզի, ռիկետոցիոզների տարածման վտանգը բարձր է՝ կապված տզերի բնական տարածագոտիների ընդլայնման և սահմանամերձ տարածքներից վարակի ներբերման վտանգի հետ:

2022 թվականի օգոստոս ամսին հանրապետությունում ասկարիդոզով հիվանդացության ցուցանիշը կազմել է 4.7 (139 դեպք), որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 2 անգամ, իսկ էնտերոբիոզի հիվանդացության ցուցանիշը կազմել է 6.7 (189 դեպք), ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է մոտ 1.6 անգամ: Արձանագրվել են տենիարինիոզի 2 և բշտային էխինոկոկոզի 4 դեպք: Նախակենդանիներով պայմանավորված հիվանդություններից արձանագրվել է ժիարդիազի 6 դեպք: Ամեռբիազի, կրիպտոսպորիդիոզի և տոքսոպլազմոզի դեպքեր օգոստոսին չեն արձանագրվել: Արձանագրվել են ոջլոտության և քոսի երկուական դեպք:

### **Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

13.09.2022թ. դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, փայտացման, կարմրուկի, կարմրախտի, համաճարակային պարոտիտի, կապույտ հազի, դեպքեր, իսկ հարկապույտ հազի և հարկապույտ հազի դեպքերը գրանցվում են հազվադեպ: Գրանցվել է մենինգակոկային մենինգիտի սպորադիկ 4 դեպք՝ չպատվաստված անձանց շրջանում, տուբերկուլոզային մենինգիտի 1 դեպք, ինչպես նաև պատվաստումներով չկանխարգելվող այլ մանրէային մենինգիտի 10 դեպք: